ԵՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է Ե.Ա.Հ.Կ. ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՎԵՐՋԻՆ ԾՐԱԳԻՐԸ

(բանաձեւ)

«Եւրախորհրդարանը,

- Հիմնուելով Կովկասի վերաբերեալ 1997 թուականի Յունիսի 18ի, 1990 թուականի Յունուարի 12ի, 1993 թուականի Յունուարի 21ի, 1993 թուականի Մայիսի 27ի եւ 1998 թուականի Նոյեմբերի 3ի իր նախորդ բանաձեւերի վրայ եւ նշելով՝

ա.- Որ 1991 թուականի Սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն իր անկախութիւնն է հռչակել նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնների համանման հռչակագրից եւ Խ.Ս.Հ.Մ.ի փլուզումից յետոյ,

բ.- Որ պատերազմը լրջագոյն հումանիտար խնդիրների եւ, մասնաւորապէս, Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից եւ Ադրբեջանից աւելի քան մէկ միլիոն մարդկանց վերաբնակեցման պատճառ դարձաւ,

գ.- Որ 1994 թուականից ի վեր հիմնականում պահպանւում է հրադադարի ռեժիմը,

դ.- Որ Հայաստանն ու Ադրբեջանը Եւրախորհրդին անդամակցելու յայտ են ներկայացրել,

ե.- Որ ժողովրդավարութեան ամրապնդումն ու մարդու իրաւունքների նկատմամբ յարգանքը նախապայման են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման համար,

զ.- Որ 1998 թուականի Հոկտեմբերին Ադրբեջանում կայացած նախագահական ընտրութիւնները նշանաւորուեցին խախտումներով եւ կեղծարարութիւններով, որոնք դատապարտութեան են արժանացել միջազգային դիտորդների կողմից, եւ որ խախտումներ են նկատուել նաեւ 1998 թուականի Մարտին Հայաստանում կայացած նախագահական ընտրութիւնների ընթացքում,

է.- Որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան քաղաքական կարգաւորման շուրջ բանակցութիւնները մինչ օրս դրական արդիւնքի չեն յանգեցրել,

ը.- Որ տարածաշրջանում առկայ բոլոր քաղաքական խնդիրներն ու վերջին քաղաքական զարգացումները նկատի առնող մօտեցման կիրառումը կարող էր յանգեցնել տեւական խաղաղութեան,

թ.- Որ Մինսկի Խմբի երեք նախագահները, որոնք ներկայացնում են Ռուսաստանը, Միացեալ Նահանգները ու Ֆրանսիան, եւ որոնց Ե.Ա.Հ.Կ.ի կողմից յանձնարարուել է ծրագիր նախապատրաստել տեւական խաղաղութեան հասնելու համար, ներկայացրել են արդարացի հիմք՝ հիմնախնդրի խաղաղ կարգաւորմանը նպատակաուղղուած բանակցութիւնների համար,

1.- Պաշտպանում է Մինսկի Խմբի ներկայացրած խաղաղ կարգաւորման ծրագիրը:

2.- Նկատի է առնում, որ այդ առաջարկութիւնները հիմնւում են այնպիսի հիմքի վրայ, որը կարող է վերջ դնել բանակցային գործընթացում առկայ փակուղային իրավիճակին:

3.- Ե.Ա.Հ.Կ. Մինսկի Խմբին կոչ է անում շարունակել հակամարտութեան տեւական կարգաւորման հասնելուն նպատակամղուած իր ջանքերը:

4.- Գտնում է, որ ցանկացած ստուգում կամ դիտորդների առաքելութիւն, որը Ե.Ա.Հ.Կ. հովանու ներքոյ պէտք է ուղարկուի Լեռնային Ղարաբաղ տեւական խաղաղութիւնն ապահովելու եւ այնպիսի միջադէպերին արագ արձագանգելու նպատակով, որոնք կարող են յանգեցնել զինուած հակամարտութեան վերսկսմանը, պէտք է հիմնուի մարդու իրաւունքների պաշտպանութեան ուժեղ տարրի վրայ:

5.- Գտնում է, որ Եւրամիութեան կողմից այդ տարածաշրջանին տրամադրուող օգնութիւնը պէտք է պայմանաւորուած լինի երկու պետութիւններում ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների պաշտպանութեան ոլորտներում իրական առաջընթացի առկայութեամբ:

6.- Գտնում է, որ Եւրամիութիւնը պէտք է աւելացնի TACISի (տեխնիկական աջակցութիւն Ա.Պ.Հ. երկրներին) ժողովրդավարութեան ծրագրի շրջանակներում տրամադրուող օգնութեան ծաւալը Հայաստանի եւ Ադրբեջանի այն ոչ-կառավարական կազմակերպութիւններին, որոնք շահագրգռուած են քննարկումների խթանմամբ եւ հակամարտութեան կարգաւորմանը առընչուող հարցերի վերաբերեալ քաղաքական գիտելիքների տարածմամբ:

7.- Յանձնարարում է նախագահին սոյն բանաձեւը յանձնել Խորհրդին, Յանձնաժողովին, Եւրոխորհրդին, Ե.Ա.Հ.Կ. Խորհրդարանական վեհաժողովին, Ե.Ա.Հ.Կ. Մինսկի Խմբի նախագահներին, Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարաններին, Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին»:

«Հ.Հ.», 13 Մարտ, 1999